

# 1 + 1



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԵՐԹ 27 ապրիլի 2019 թ. թիվ 3 (3)

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ Է ԱՅԴՊԵՍ Ե ԿԱՐԾՈՒՄ ԱՐՅԱՆԻ ՀԵՐՈՍ, ԱՐՅԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼԵԳԵՆԴ, ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ՝ ՆՈՒՅՆ ԻՆՔԸ ԿՈՄԱՆԴՈՍԸ

Մենք շատ ուրախ ենք, որ գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը ժամանակ գտավ մեր հարցերին պատասխանելու համար: Գեղարքունիք գյուղի բնակիչները տեսել են, լսել և կարդացել Արցախի հերոս Կոմանդոսի մասին: Շուշիի ազատագրման օրվան ընդառաջ մենք կազմակերպեցինք հարցազրույց Արկադի Տեր-Թադևոսյանի հետ:

- Ե՞րբ և որտե՞ղ եք ծնվել:  
- Ծնվել եմ 1939 թվականի մայիսի 22-ին, Թիֆլիսում:  
- Հիշո՞ւմ եք այն օրը, երբ գնացիք առաջին դասարան:  
- Ես 4-5 ամիս սովորել եմ հայկական դպրոցում, հայրս կռվի դաշտից եկավ, և ինձ տեղափոխեցին ռուսական դպրոց: Ոչ հայերեն էի նորմալ խոսում ոչ ռուսերեն:  
- Ի՞նչ հետաքրքիր դեպք եք հիշում Ձեր դպրոցական տարիներից:  
- Երբ սեպտեմբերին գնում էինք դպրոց, մի ցուցանակ կար, որի վրա գրված էր «Բարի գալուստ»: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին այդ ցուցանակը տանում էին տանիք, որտեղ տղաներով հավաքվում, զրուցում էինք, իսկ այդ պատահաբար մեզ խանգարում էր: Մի գերեզմանոց կար դպրոցին մոտիկ, և տղաներով այդ ցուցանակը տարանք և փակցրինք գերեզմանոցի մուտքին: Հետո մեզ նկատեցին և լավ ծեծեցին: Տնօրենը հորս կանչեց դպրոց, բայց քանի որ հայրս զիտեր չորս լեզու, ես հորս փոխարեն տատիս տարա դպրոց, ով զիտեր միայն հայերեն: Նրանց զրույցի թարգմանիչը ես էի և վատ բաներ ասելու փոխարեն ինձ գովաբանեցի տատիս մոտ: Տատիս հետ տուն գնացինք, և նա հորս ասաց, թե ինչքան լավ բաներ են ասել իմ մասին: Ի պատասխան իմ լավ արարքների հայրս ինձ նվիրեց նոր շորեր և ձեռքս բռնեց, ու գնացինք դպրոց: Տնօրենը պատմեց ինչպես որ եղել էր, և հայրս ինձ ապուսկեց ու էլ երբեք դպրոց չեկավ:



դունվել համալսարան, իսկ ես ցանկանում էի զինվորական դառնալ: Հայրս շատ էր սիրում Իսակովին՝ ով նաև իմ իղեակն էր, և երբ իմացա, որ նա ծովակալ է, հորս ասացի, որ ուզում եմ ծովակալ դառնալ, ու ինձ ուղարկեցին ակադեմիա, սակայն տետղական խնդրի պատճառով չկարողացա ընդունվել իմ ուզած բաժինը և հենց այդ տարում ընդունվեցի մեկ այլ բաժին:  
- Մեր այն հարցին, թե Արկադի Տեր-Թադևոսյանը ո՞ր տարիքից է սկսել մասնակցել բուն ռազմական գործողություններին, Կոմանդոսը կատակեց ասելով, որ բուն ռազմական գործողություններին սկսել է մասնակցել առաջին դասարանից:  
- Որտե՞ղ եք սովորել դպրոցն ավարտելուց հետո:  
- Դպրոցն ավարտելուց հետո սովորել եմ Բաքվի զինվորական ուսումնարանում, այնուհետև Լենինգրադի տրանսպորտի և թիկունքի ռազմական ակադեմիայում:  
- Ունեցե՞լ եք հերոսի իղեակ:  
- Ինձ համար հերոսի իղեակը հայրս է՝ Հովհաննեսը, ով եղել է հայկական լեգեոնի անդամ, միշտ ցանկացել եմ նմանվել նրան, սակայն մի անգամ հորիցս նեղացել եմ. մայիսի 9-ին մենք տղերքով հավաքվեցինք, ամեն մեկս վազեց իր հոր մոտ, ու հայրս իմ փոխարեն ընկերոջս գրկեց, ու ես անհասկանալի ձևով նեղացա, եկա մորս բողբոջի, ասացի, որ հայրիկը ինձ չի սիրում: Մայրս հորս ասաց, իսկ հայրս ինձ բացատրեց:  
- Բայա՛, ես կամ, մաման կա, կողքը կանգնած եմք, իսկ նրա պապան գոհվել ա ու իր կողքը չէ:  
- Ունե՞ք չիրականացած երազանք:  
- Միշտ երազել եմ, որ տղաս շարունակի իմ ճանապարհը: Երիտասարդ տարիներին, երբ տղայիս ինձ հետ տանում էի գորավարժությունների, կարծում էի, որ երազանքս կիրականանա: Միշտ հիշում եմ, որ գորավար-

ժություններից մեկի ժամանակ ներկայացնում էինք մեր տանկային գունարտակը և հանկարծ նկատեցինք մի տանկ, որի վարորդը կարծես հարթած լիներ, և հենց այդ պահին դադարեցրինք գորավարժությունը: Երբ «հարթած» վարորդին հրամայեցինք ներկայանալ, տանկից դուրս եկավ իմ տանկչորսամյա տղան: Նրան նույնիսկ ինձ հետ անտառ էի տանում հրաձգության: Սակայն կինս դեմ էր մեր որդու զինվորական կարիերային, և նա ավելի ուժեղ գտնվեց, ու տղաս չդարձավ զինվորական: Իսկ այսօր երազանքս այն է, որ թոռնիկս դառնա զինվորական և շարունակի իմ ճանապարհը:  
- Մարտի դաշտում ո՞րն էր ամենահիշարժան դեպքը:  
- Երբ թուրքերը հայաթափ էին անում հայկական գյուղերը և հասել էին Հաղուրթի շրջանի քսանհինգերորդ գյուղին, ինձ քսան հոգու հետ ուղարկեցին գյուղացիների անվտանգությունը պաշտպանելու: Իմ զխում միայն մի միտք էր՝ արագ փախչել, սակայն երբ հանդիպեցի գյուղը լքող գյուղացիներին, հասկացա, որ հետդարձի ճանապարհ չկա: Հանդիպելով Դավիթին (Ղեյվ), լսելով նրա պահանջը, որ պետք է ազատագրենք այդ գյուղը կարծես հոգիս գերբնական ուժ ստացավ: Հավաքվեցինք գյուղի տներին մեկուս, պատից պոկեցի պատառը, սկսեցինք կազմել գյուղի ազատագրման գործողությունների պլանը: Եվ հենց այդ պլանով մեզ հաջողվեց ազատագրել Տող գյուղը:  
- Ո՞րն է ամենասպասված և Ձեզ համար ամենաթանկ շքանշանը:  
- Շուշիի ազատագրման համար շնորհված շքանշանը, որին սպասում էի ավելի քան տասը տարի:  
- Ինչո՞ւ է Շուշիի ազատագրման օպերացիան ստացել «Հարսանիք լեռներում» անվանումը:  
- Երբ արդեն Շուշիի ազատագրման

գործողությունների պլանը կար, իսկ մի քանի օրից աղջկա հարսանիքն էր, որոշել էինք, որ օպերացիան կիրականացնենք այն ժամանակ, երբ ես կվերադառնամ: Սակայն երկու օր չանցած՝ մի արկղ 50 տարեկան «Տիգրան Մեծ» կոնյակ ձեռքին եկավ Վազգեն Սարգսյանը և ասաց, որ օպերացիան պետք է իրականացնենք: Ես նրա հետ պայման կապեցի, որ Շուշին ազատագրելու դեպքում նա պետք է ամուսնանա: Եվ խնդրեցի Սերժ Սարգսյանին ստորագրել Շուշիի ազատագրման հրամանը: Սակայն ստացվեց այնպես, որ Շուշին ազատագրվեց առանց որևէ փաստաթղթի ստորագրման:  
- Ունե՞ք սիրելի զբաղմունք:  
- Այո, կնոջս հետ սիրում եմք ճանապարհորդել, և որտեղ լինում եմ, ինձ հետ քար եմ բերում տուն. առիասարակ քարեր շատ եմ սիրում: Սիրում եմ Հայաստանը և իմ կյանքի ընթացքում միշտ ձգտել եմ Հայաստանի բոլոր վայրերում լինել: Սիրում եմ կնոջս հետ այցելել եկեղեցիներ, նաև եղել եմ Գեղարքունիք գյուղի Սուրբ Ստեփանոս մատուռում:  
- Սիրում եմ նաև մետաղադրամներ հավաքել դեռ այն ժամանակվանից, երբ տատս ինձ Նիկոլայի պատկերով մետաղադրամներ տվեց:  
- Մարդու մեջ ամենից շատ ո՞ր հատկանիշն էք կարևորում:  
- Ընկերասիրությունն էմ ամենից շատ կարևորում մարդու մեջ, քանի որ ընկերներ չունեցող մարդը «կիսատ է»: Ընկերներին մենք ենք ընտրում: Մեզ շրջապատող մարդկանցից մենք ենք ընտրում այն մարդկանց, ում հետ ունենք բնավորության ընդհանուր գծեր, նախասիրություններ, նման մտածելակերպ, որոնց վրա կարող ես հույս դնել ցանկացած պարագայում:  
- Իսկ ի՞նչ դեր ունի Ձեր կինը Ձեր կյանքում:  
- Կինս ցանկացած հարցում սատարում է ինձ և կողքիս կանգնում, նույնիսկ դիպլոմային աշխատանքս նա է գրել և իմ կյանքում շատ կարևոր մարդ է:  
- Ի՞նչ խորհուրդ կտաք մեր դպրոցի աշակերտներին:  
- Լավ սովորել, ուսումնասիրել մեր տարածաշրջանի պետությունների, ժողովուրդների պատմությունը, արժեհամակարգերը և փիլիսոփայությունը, սովորել լեզուներ, զբաղվել սպորտով, քիչ խոսել և շատ գործել, լինել Անդրանիկների և Նժդեհների պատվաբեր թոռներ և երեխաներ:  
Ես գիտեմ Ձեր գյուղը, մարդկանց, դուք աշխատասեր և հայրենասեր մարդիկ եք, ես Ձեզ հավատում եմ:

Ալլա Աբրահամյան  
Լուսինե Գրիգորյան  
Սամվել Միքայելյան  
Սյուզաննա  
Կարապետյան



# ԻՄ ՊԱՐՏՔՆ ԵՄ ԿԱՏԱՐՈՒՄ



**Հրաչիկ Հովհաննիսյան**

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները շնորհավորում են նույն դպրոցի շրջանավարտներ, այժմ Հայոց բանակի զինվոր Հրաչիկ Էդգարի Հովհաննիսյանին և Արցախում ծառայող Գուրգեն



**Գուրգեն Վարդանյան**

Վարդանի Վարդանյանին ծննդյան օրվա առթիվ: Մենք հպարտ ենք, որ մեր համազորակցները պատվով են կատարում իրենց պարտքը: Ցանկանում ենք անփորձանք ծառայություն և բարի վերադարձ:

# ՄԵՐ ՈՒՂԵՐԶԸ ԶԱՐ ՈՒԺԵՐԻՆ



**Լուսինե Առաքելյան**

Հայերը անցել են պատմության այնպիսի ճանապարհ, որով քիչ ազգեր են անցել և հասել 21-րդ դար ունենալով պետականություն: Մենք հպարտ ենք, որ 2016 թվականին հայկական բանակը հակահարված տվեց չար ուժերին: Ցավակցում ենք զոհվածների հարազատներին. մենք ձեր կողքին ենք: Մենք պետք է դուրս գանք կաղապարներից, և

մեզ պետք է մտահոգեն բոլոր այն անարդարությունները, որոնք կատարվում են ամբողջ աշխարհում: Մենք ցեղասպանություն տեսած ազգ ենք և միայն համագործակցելով աշխարհի բարի ուժերի հետ՝ կդատապարտենք չարին, որովհետև չարի դեմ բարությանը կարող են հաղթանակ տանել:

# ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ

Նորից բացվեց գարունը, և գարնանային աշխատանքները սկսվեցին: Ճիշտ է, հայրիկս մեկնել է արտագնա աշխատանքի, բայց ես փորձում եմ լրացնել նրա բացը: Աշխատում եմ անել այնպես, որ ծնողներս ինձանով հպարտանան, օգնում եմ պապիկիս և մշակում հողը: Կարծում եմ, որ իմ ջանասիրության և աշխատասիրության շնորհիվ մի օր կհասնեն մեծ բարձունքների, իսկ դրան հասնելու համար պետք է հավատամ իմ ուժերին և ինքս ինձ:



տանք էր սպասվում: Ես վերջացրի աշխատանքս և հոգնած շտապեցի տուն, ճանապարհին մտածում էի, որ տուն հասնելուն պես զնալու եմ խաղալու: Հասա տուն և ճաշեցի: Շտապում էի դուրս գալ խաղալու, երբ լսեցի, թե ինչպես է տատիկս գովաբանում ինձ հարևանի մոտ.

- Թողնիկս շատ աշխատասեր է, անդադար աշխատում է և փորձում լրացնել հոր բացը, և չնայած նրան, որ ամբողջ օրը զբաղված է տնային գործերով, սովորում է իր դասերը և ապագայում հաստատ մեծ մարդ է դառնալու: Հիշեցի մեր գյուղը, որը տեսել էի վերևից և նաև այն, որ պետք է ճանապարհորդեմ աշխարհով մեկ և բացահայտեմ այն: Միտքս փոխեցի և ոգևորված սկսեցի պատրաստել դասերս:

Այս ամենը վերլուծելով ես իմ առջև նպատակ եմ դնում հաղթահարել բոլոր խնդիրները և ապագայում հասնել մեծ հաջողությունների:

**Արսեն Գևորգյան**

# «1 + 1»-Ի ԱՅՑ «ԱՌՎՈՏ» ՕՐԱԹԵՐՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ություն է:  
-Ո՞րն է լրագրողական այն կարմիր գիծը, որը չի կարելի անցնել:  
-Կարմիր գիծը նախ խմբագրության սահմանած էթիկայի կանոններն են: Ելնելով խմբագրության վարքականոցներից՝ լրագրողը չպետք է գրի որևէ պաշտոնյայի անձնական կյանքի մասին, քանի որ դա մարդու իրավունքն է և արժանապատվությունը:  
-Հնչեցին բազմաթիվ հարցեր, որոնք ստացան իրենց պատասխանները:  
Այնուհետև պատանի լրագրողները զրուցեցին օրաթերթի մշակութային էջի լրագրողներից մեկի՝ Գոհար Հակոբյանի հետ.  
- Հիմնականում ո՞ր թեմաներն են հետաքրքրում ընթերցողներին:  
-Ցավոք, ընթերցողներին ավելի շատ հետաքրքրում են «արյունոտ» թեմաները:  
-Որո՞նք են ամենակարևոր այն հատկանիշները, որ պետք է ունենա լրագրողը:  
-Լրագրողը նախ պետք է լինի բարեխիղճ, հետևողական, կարողանա որսալ տեղեկատվությունը: Պետք է լինի օբյեկտիվ և լսի բոլոր կողմերին:  
-Իսկ ինչու՞ ընտրեցիք լրագրողի մասնագիտությունը:  
-Դե դա հետաքրքիր մասնագիտություն է, այն ավելի շատ սևագործ բանվորի մասնագիտություն է:  
-Լրագրության մեջ կա՞ «ոսկե կանոն»:  
-Ինչպես բժշկության մեջ, այնպես էլ լրագրության մեջ, հիմնականում առաջնորդվում ենք «մի՛ վնասիր» սկզբունքով:  
«1+1» թերթի սկսնակ լրագրողները զրուցեցին նաև օրաթերթի գլխավոր խմբագրի տեղակալ և թերթի պատասխանատու Վոլոդյա Պետրոսյանի հետ: Նրա խորհուրդները մեզ ուղղորդեցին լրագրողական աշխատանքների ճիշտ կատարմանը, և հուսով ենք, որ այդ խորհուրդների միջոցով տարիների իր փորձը փոխանցվեց մեզ:

2019թ. ապրիլի 19-ին Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում գործող «1+1» թերթի պատանի լրագրողները, խմբագիր-պատասխանատուն և դպրոցի տնօրենը այցելել էին «Առավոտ» օրաթերթի խմբագրություն, որտեղ «1+1» թերթի սկսնակ լրագրողները հնարավորություն ունեցան իրենց մտահոգող և հետաքրքրող, ինչպես նաև մասնագիտական հարցերը ուղղել օրաթերթի փորձառու լրագրողներին: Օրաթերթի խմբագիրներից մեկը սկսնակ լրագրողներին ծանոթացրեց իրենց գործելաոճի և աշխատակազմի հետ: Երկար գրույցից հետո սկսնակ լրագրողները իրենց հարցերը ուղղեցին օրաթերթի սոցիալ-տնտեսական էջի պատասխանատու լրագրող Նելլիին.  
-Ինչու՞ որոշեցիք ընտրել լրագրողի մասնագիտությունը:  
-Դա հատուկ չեմ որոշել, հանգամանքների բերումով է ստացվել, լավ մարդկանց հետ հանդիպելուց ու նրանց փորձը տեսնելուց հետո: Լրագրությունը ներքին բնավոր

# ՖԻԶԻԿԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ



Գեղարքունիքի միջնակարգ դպրոցը տարիներ շարունակ ունեցել է ֆիզիկայի և քիմիայի լաբորատոր սարքավորումների կարիք:  
Դպրոցում գործող ԿԿՀ-ի կողմից կազմակերպված «Շահերի պաշտպանության» խմբակի անդամները իրենց կազմած ծրագրով դպրոցում ստեղծեցին ֆիզիկայի լաբորատորիա, որտեղ անցկացվում են ֆիզիկայի հետաքրքիր ու դիտարժան դասեր:

# ՄԵՐ ԳՐԱԴԱՐԱՆԸ



Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի թե՛ ուսուցիչների և թե՛ աշակերտների համար գրադարանը հաճելի վայր է: Մենք շատ ենք սիրում լինել այնտեղ, քանի որ մեզ հուզող հարցերի պատասխանները գտնում ենք հենց գրադարանում: Մեր դպրոցի գրադարանը ունի համակարգիչ, տպիչ-պատճենահանման սարք, սնուցման սարք, համակարգչային աթոռ, բազմաթիվ նոր գրքեր, որոնք ձեռք են բերվել մեր գրադարանավարի՝ Սիրուն Աբրահամյանի ակտիվ աշխատանքի ու թափած ջանքերի շնորհիվ /այդ բոլորը ձեռք են

բերվել Սիրուն Աբրահամյանի կողմից՝ Գեղարքունիքի մարզում Սահարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոնի հայտարարած գրադարանավարների մրցույթին մասնակցելու և հաղթելու արդյունքում: Մենք՝ աջակիցների խորհրդի անդամներ, ընկեր Աբրահամյանի հետ միասին հաճախ ենք անդրադառնում գրքերի համալրման ուղիներին և կարծում ենք, որ այս պարագայում, երբ հնարավորություն չկա պետական աջակցության, միակ ելքը մնում է տեղեկացված լինել տարբեր մրցույթներից և մասնակցել ու հաղթել, ինչպես նաև դիմել տարբեր մարդկանց, ովքեր ունեն սեփական գրքեր:

Նման շնորհակալ գործ է կատարել մեր Գրետ Վարդանյանը, ով իր անձնական գրքերը նվիրեց մեր դպրոցի գրադարանին:

Դիմում ենք բոլոր այն մարդկանց, ովքեր ունեն գրքեր և ցանկություն կունենան դրանք նվիրելու մեր դպրոցի գրադարանին:

Կանխավ շնորհակալ ենք:

# ՅՈՒՅՆԱՆԴԵՍ-ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԵՎ ԻՎԱՆՍՈՒՐԻ ԸՆԴՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ԿԱՄ ԶԱՏԻԿԻՆ

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ Սուրբ Հարություն տոնին նվիրված միջոցառումը, որին մասնակցում էին 7-րդ դասարանի աշակերտները: Նրանք բացատրեցին և ներկայացրեցին Ջատիկի խորհուրդը և նպատակը: Երգ ու պարի միջոցով մեկ անգամ ևս ցույց տվեցին, որ հայ ժողովուրդն ավանդաբար պահեց ու պահպանեց Աստվածորդու ծննդյան և իրաշարժը հարու-

թյան տոնը՝ այն փոխանցելով գալիք սերունդներին:

Քրիստոսի Հարությունը կյանքի հաղթանակն է մահվան դեմ, ճշմարտության հաստատումը և ստի ու կեղծիքի մերժումը, մեղքից ազատվելու և այն մերժելու մարդու հնարավորությունը հոգևոր մաքրագործումի միակ ուղիով:



Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ «Սուրբ Ջատիկը բնության և բարության լույսի ներքո» խորագրով մեկամսյա միջոցառման արդյունքների ամփոփում և մրցանակաբաշխություն, որը կազմակերպել էր «Աժդահակ» բնապահպանական կենտրոնը: Նվերներ ստացան ինչպես մրցանակակիր, այնպես էլ բոլոր մասնակից երեխաները /100+/: Ամփոփումը կատարվեց ժյուրիի ընտրված անդամների կողմից:



Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի աշակերտները ճանաչողական և կրթադաստիարակչական այց կատարեցին թեթև արդյունաբերության ոլորտի առաջատար ընկերություններից մեկը՝ «Ալեքս տեքստիլ» և Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան:

Նրանք շրջեցին արտադրամասում, ծանոթացան իրականացվող աշ-

## ՃԱՆԱԳՈՂԱԿԱՆ ԱՅՑ

խատանքներին և հասկացան, որ տեղական արտադրանքը կարող է լինել մրցունակ ցանկացած շուկայում: Մեծ համբավ վայելող իտալական արտադրության սարքավորումները ապահովում են որակյալ և ոճային արտադրանք:

Հյուրընկալվելով Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան աշակերտները մեկ անգամ ևս ծանոթացան հեղինակի կյանքին ու գործունեությանը, տեսաֆիլմով տեսան և ունկնդրեցին նրա կենդանի ձայնը: Գեղեցիկ այգին իր գույներով ներդաշնակվում էր նրա ստեղծագործությունների հետ: Աշակերտները շրջեցին տուն-թանգարանի այգում, ըմբռնեցին բնության գեղեցկությունը: Աշակերտները հոգեպես բավարարված էին և տպավորված այդ օրվանից:


«Վորդ-Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության Գավառի տարածքային մասնաճյուղի աջակցությամբ Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի աշակերտների համար կազմակերպվեց մասնագիտական կողմնորոշման ճանաչողական այց «Գավառի Ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան Պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ: Այցը կազմակերպել էին համայնաքյին համակարգողը և «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի վարողը: Աշակերտները ծանոթացան քոլեջում դասավանդվող և ժամանակի մասնագետներ պատրաստող բաժիններին:

- Ֆինանսներ, որտեղ կարող են սովորել և առկա, և՛ հեռակա կարգով 2-3 տարի ժամկետով:
- Հաշվապահական հաշվառում 3 տարի ժամկետով:
- Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում 3 տարի 6 ամիս ժամկետով:
- Անասնաբուժություն 3-4 տարի:
- Համակարգիչների շահագործում 3 տարի

• Կաթի կաթնամթերքի տեխնոլոգիա՝ 3 տարի

Գավառի գյուղատնտեսական քոլեջն ունի բոլոր մասնագիտությունների համար համապատասխան սարքավորումներով հարուստ լսարաններ, որոնցից յուրաքանչյուրում մանրակրկիտ տեղեկություններ են տրամադրվում համապատասխան մասնագիտության վերաբերյալ: Քոլեջում գործում է նաև «SKYE» ակումբ, որտեղ ուսանողները ստանում են ոչ ֆորմալ կրթություն: Քոլեջն ունի գրադարան, որից ուսանողները կարող են օգտվել ցանկացած պահի: Քոլեջն ունի նաև սպորտդահլիճ՝ բոլոր անհրաժեշտ պարագաներով, և հանդիսությունների նորակառույց դահլիճ, որտեղ կազմակերպվում են միջոցառումներ ուսանողների ակտիվ մասնակցությամբ:

Այսպիսով «Գավառի Ա. Ա. Թամանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ն իր հարուստ ու բազմաբովանդակ պայմաններն է առաջարկում յուրաքանչյուրին ճիշտ մասնագիտություն ընտրելու հարցում:



Խաչբառը պատրաստեց Սերժիկ Խաչատրյանը

- ԽԱՉԲԱՐ**
- Ուղղահայաց**
- Նոր Հայաստանի անունը Փոքր Ասիայում XI -XIV դարերում:
  - Ո՞ր թագավորի օրոք Հայաստանում ընդունվեց քրիստոնեությունը ընդունեց:
  - Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքը:
- Հորիզոնական**
- Ո՞ր թագավորը Ծովքը միացրեց Մեծ Հայքին:
  - Ո՞ր ճակատամարտն է տեղի ունեցել 481թվականին:
  - Ո՞վ է Բագրատունիների առաջին թագավորը:
  - Հայ գորավարի անունը Ավարայրի ճակատամարտում
- Պատասխանները՝ թերթի հաջորդ համարում**



Հարգելի՛ համագյուղացիներ, Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթին տրված ձեր հարցազրույցները մեր դպրոցականների համար ինքնահաստատման դաս են, որով մեր երեխաները ձեր կողմից տրված նյութերը շարադրում են իրենց հայացքների և հասկացողության շրջանակում: Մենք ներողություն ենք խնդրում, եթե չենք մանրամասնում այն, ինչի մասին խոսվում է: Հարգանքով՝ Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթի խմբագրություն:

**4** «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ  
 Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1  
 Փոստային դասիչ՝ 1207  
 Թողարկման օրը՝ 27. 04. 2019 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝  
 Ռոզա Հակոբյան  
 Տպագրանակը՝ 500  
 Հեռախոս՝ 093919658:  
 էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru